II

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌԱԿԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ (XIX դ. կես – XX դ. սկիզբ)

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Լոռին Անդրկովկասում առաջիններից էր, որ 1801 թ. Արևելյան Վրաստանի կազմում անցավ Ռուսաստանի տիրապետության տակ՝ որպես նորաստեղծ Վրացական նահանգի առանձին վարչամիավոր[1]: 1840 թ. վարչական նոր բաժանման արդյունքում Լոռին մտավ Վրացա-իմերեթական նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ, իսկ 1846 թ. բաժանմամբ մնաց նոր ձևավորված Թիֆլիսի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի կազմում[2]:

Անդրկովկասի հայ բնակչության համար կարևոր նշանակություն ունեցավ 1849 թ. կազմավորված Երևանի նահանգը, որի կազմում, ի թիվս Փամբակի և Շորագյալի գավառակների (դիստանցիաներ), տեղ գտավ նաև Լոռին: Սակայն հայաշատ այս շրջանը Երևանի նահանգի կազմում երկար չմնաց, 1862 թ. այն հանվեց Ալեքսանդրապոլի գավառի կազմից ու միացվեց Թիֆլիսի նահանգի համանուն գավառին[3]:

1880–1917 թթ. Լոռին նորաստեղծ Բորչալուի գավառի հարավային լեռնային մասն էր կազմում[4]: Չնայած վարչատարածքային բազմաթիվ ձևափոխումներին՝ այն եղել և մնում է պատմաազգագրական առանձին մարզ՝ իր ավանդույթներով, հարուստ մշակույթով, բնակչության էթնիկական կազմի բազմազանությամբ ու վերարտադրության առանձնահատկություններով:

Սույն հոդվածի համար հիմնական նյութ են ծառայել Հայաստանի ազգային արխիվի 53 ֆոնդի բնակչության վիճակագրության տվյալները, որոնք վերաբերում են Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի Լոռու վիճակի կամ գավառակի (արդի Ստեփանավանի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններ) հայ բնակչության թվի փոփոխություններին ու բնական շարժի առանձնահատկություններին[5]: Հայկական բնակավայրերում եկեղեցու սպասավորների կողմից՝ բնակչության թվի, ծնունդների, պսակադրությունների ու մահացությունների մասին հավաքված ամենամյա տվյալները յուրաքանչյուր տարվա վերջին կամ հաջորդ տարվա սկզբին

---

[1] А. Ш а х а т у н я н. Административный передел Закавказского края. Тифлис, 1918, с. 84.

[2] *Նույն տեղում, էջ 85–86, 89:*

[3] *Նույն տեղում, էջ 90–91, 94:*

[4] *Նույն տեղում, էջ 98–99:*

[5] *Հաղպատը, Շնողը և հարակից մի քանի գյուղեր Ղազախի գավառակի մաս էին կազմում, ուստի դուրս են մնացել այս ցուցակից:*


ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌԱԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Սահմաններ
Բարչալուի գավառի
22 գյուղական
22 մարզերի
Տարածաշրջանների
Վանքեր
Եկեղեցիներ
Բարձրության նիշեր
Բարձրադիր բլիթով նշված են տարածաշրջանները.
1 Տաշիրի
2 Թումանյանի
3 Ստեփանավանի
4 Սպիտակի
5 Գուգարքի
Բնակավայրեր
Օձուն 1500 և ավելի մարդ
Ագարակ 800-1500 մարդ
Ճոճվան Մինչև 800 մարդ
Ճանապարհներ
Աղբյուրներ
Գետեր
Գյուղերի հեղինակն է Գրիգոր Հ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ.

ուղարկվում էր Թիֆլիս՝ Վիրահայոց թեմի առաջնորդարան: Այդ տվյալներն ըստ տարիների և գավառների լրամշակվում, ամփոփվում էին առանձին մատյաններով, իսկ որոշ դեպքերում բազմացվում էին տպագրական եղանակով: Սույն հոդվածում ներկայացված նյութերի մեծ մասն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ. դրանք նոր լույս են սփռում Բորչալուի գավառի Լոռու գավառակի շուրջ 35 բնակավայրերի ու բնակչության թվի փոփոխությունների վրա (տե՛ս քարտեզը):

Նշված ֆոնդի հարուստ ու բազմաբովանդակ նյութերը եզակի սկզբնաղբյուրներ են 1841–1914 թթ. Վրաստանի և Իմերեթի թեմի հայ բնակչության ժողովրդագրական զարգացումների տեսանկյունից: Աշխատանքի նպատակն է նշված ֆոնդի վիճակագրական տվյալների հիման վրա ներկայացնել Լոռու հայ բնակչության թվի շարժընթացը, աճի տեմպերը, վերարտադրության ռեժիմը, դրանց պատճառներն ու զարգացման միտումները:

Անդրադառնալով բնակչության թվաքանակի փոփոխություններին՝ նշենք, որ Լոռու բնակչության մասին ֆոնդի ամենահին տվյալները վերաբերում են 1839–1840 թ.[6]*, որոնք, սակայն, թերի են, ուստի հաշվարկների համար հիմք են ծառայել 1841 և հետագա տարիների՝ համեմատաբար ամբողջական տվյալները:*

Աղյուսակ 1

Լոռու վիճակի բնակչության թվի շարժընթացը 1841–1868 թթ.

	Բնակավայրերի անվանումը	1841	1845	1851	1855	1858	1861	1868
1	Ջալալօղլի (Ստեփանավան)	238	333	384	418	467	571	739
2	Գեառգեառ (Գարգառ)	270	368	414	387	434	502	699
3	Գյուլագարակ	234	258	132	228	358	450	531
4	Վարդաբլուր	206	226	215	269	341	385	514
5	Հոբարձի	35	73	83	92	94	143	147
6	Կուրթան	392	370	408	397	510	380	686
7	Հայտարբեկ (Սվերդլով)	188	235	125	158	192	243	333
8	Ուռուտ	159	92	84	103	88	249	256
9	Լեջան	196	112	50	52	194	285	297
10	Լոռիբերդ	22	38	24	58	64	91	134
11	Ագարակ	94	119	202	214	244	282	428
12	Օձուն	873	1036	996	1341	1481	1351	1752
13	Ամոջ	39	17	28	–	–	–	–

[6] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 51–56:*

14	Այգեհատ	124	114	159	188	208	238	241
15	Արդվի	67	59	88	91	132	122	179
16	Աքորի	168	159	227	213	325	373	407
17	Ծաթեր	103	83	132	155	158	161	104
18	Դսեղ	180	110	306	407	506	531	710
19	Ջորագյուղ	66	76	97	124	131	133	207
20	Շահալի (Վահագնի)	130	120	397	301	333	470	499
21	Մարց	230	280	251	304	455	415	322
22	Սանահին	165	149	190	227	290	255	281
23	Որնակ (Ակներ)	63	56	100	114	123	167	174
24	Ճոճկան	288	261	317	370	402	453	581
25	Քարինջ	–	42	107	123	154	163	215
27	Դորմեկատուս	–	54	–	–	–	–	–
28	Սովուխբուլաղ	–	42	–	–	–	–	–
29	Կողես	–	94	–	–	–	–	–
30	Ղաչաղան (Արևածագ)	–	–	127	132	117	136	194
31	Հագվի	–	–	–	–	114	120	168
32	Մղարթ	–	–	–	–	153	183	231
33	Խաչիգեղ (Դեբեհ)	–	–	–	–	–	–	279
34	Սադիբագդի (Զկալով)	–	–	–	–	–	–	127
35	Լորուտ	–	–	–	–	–	–	333
	Ընդամենը	4530	4976	5643	6466	8068	8852	11768

Բնակավայրերի թվի, մարդաշատության (տե՛ս քարտեզը) և բնակչության աճի բացարձակ ու հարաբերական արժեքների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար վերլուծենք աղյուսակ 1-ի տվյալները[7]: Ըստ դրանց՝ Լոռու վիճակի բնակչությունը 27 տարվա ընթացքում ավելացել է շուրջ 2.6 անգամ, տարեկան միջին աճը կազմել է 2.3 %: Բնակչության թվի փոփոխությունների պատկերն ավելի ակնառու դարձնելու համար հաշվարկները ներկայացնենք ըստ տասնամյակների. այսպես, 1841–1851 թթ. բնակչությունն աճել է 1.2 անգամ կամ տարեկան միջին աճը կազմել է 1.9 %, 1851–1861 թթ.՝ համապատասխանաբար 1.5, կամ 3.6 %, իսկ 1858–1868 թթ.՝ ավելի քան 1.4, կամ 3.1 %: Բերված տվյալները խոսում են այն մասին, որ բնակչությունն աճի համեմատաբար բարձր տեմպեր է ունեցել հատկապես XIX դ. երկրորդ կեսին՝ պայմանավորված ծնելիության բարձր ցուցանիշներով, որոնք հիմնականում արդյունք էին քաղաքական կայունության և տնտեսական որոշ աշ-

[7] *ՀԱԱ, ֆ. 53 (Լոռու վիճակի հայ բնակչության թիվը), ց. 1, գ. 3802, մաս 1, 1841 թ., թ. 28–31, գ. 3805, 1843 թ., թ. 18–22, գ. 3809, 1844 թ., թ. 124–126, գ. 3814, 1847 թ., թ. 4–5, 80, գ. 3819, 1852 թ., թ. 83–85, գ. 3828, 1856 թ., թ. 40, գ. 3843, 1863 թ., թ. 13–14, գ. 3850, 1867 թ., թ. 2–3:*

խուժացման. ի դեպ, կարող ենք արձանագրել, որ ընդհանուր աճի մեջ իր ուրույն տեղն է ունեցել բնական վերարտադրությունը:

Աղյուսակ 2-ը, լինելով նախորդի շարունակությունը, ներկայացնում է XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. սկզբներն ընկած ժամանակահատվածում Լոռու վիճակի հայկական բնակավայրերի և բնակչության թվի փոփոխությունները[8]:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 1873–1883 թթ. բնակչությունն ավելացել է 1.3 անգամ կամ տարեկան միջին աճը կազմել է շուրջ 3 %, հաջորդ տասնամյակում (1883–1893 թթ.) ևս նույն պատկերն է արձանագրվել, իսկ 1893–1914 թթ.՝ ավելի քան 1.6 անգամ և 3.2 %: Տարեկան միջին աճի բարձր ցուցանիշների համար նպաստավոր էին նաև 1873 թ. հողային բարեփոխումները և կապիտալիստական հարաբերությունների աշխուժացումը: Այսպես, 1873–1893 թթ. հայ բնակչությունն ավելացել է 1.7 անգամ, իսկ տարեկան միջին աճը կազմել է 3.5 %: Ժողովրդագրական 41-ամյա գործընթացների արդյունքում բնակչությունն ավելացել է 2.8 անգամ, իսկ տարեկան միջին աճը կազմել է շուրջ 4.5 %:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ եթե 1841–1901 թթ. Լոռու բնակչությունն ավելացել է 6 անգամ և տարեկան ունեցել է 7 % միջին աճ, ապա 1901–1914 թթ. աճի տեմպերի թուլացման հետևանքով տարեկան միջին ցուցանիշը նվազել ու կազմել է 747 մարդ կամ 2.7 %: Այս հանգամանքն իր ազդեցությունն է թողել ուսումնասիրվող ժամանակահատվածի բնակչության թվի շարժընթացի վրա. այսպես, 1841–1914 թթ. բնակչությունն ավելացել է ավելի քան 8 անգամ կամ 32.9 հազ. մարդով, տարեկան միջին աճը կազմել է 450 մարդ:

Աղյուսակ 2

Լոռու վիճակի բնակչության թվի շարժընթացը 1873–1914 թթ.

	Բնակավայրերի անվանումը	1873	1883	1889	1893	1901	1907	1914
1	Ջալալօղլի (Ստեփանավան)	886	1456	1944	1987	3000	2240	1976
2	Գեառգեառ (Գարգառ)	654	863	1120	1291	1320	1638	1751
3	Գյուլագարակ	289	960	1004	1108	1402	1181	1747
4	Վարդաբյուր	505	687	824	907	1282	1243	1733
5	Հոբարձի	134	265	346	402	463	435	638
6	Կուրթան	869	1141	990	1115	1336	1537	1921

[8] *ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3870, թ. 13–14, 1878 թ., գ. 3875, մաս 2, թ. 118–119, 1883 թ., գ. 3877, թ. 36, 1885 թ., գ. 3884, մաս 1–2, թ. 25, 105–106, 1889 թ., գ. 3889, մաս 1, թ. 47, 1891 թ., գ. 3899, մաս 2, թ. 96, 1897 թ., գ. 3900, մաս 1, թ. 75, 1899 թ., գ. 3906, մաս 1, թ. 16, 44–45, 1901 թ., գ. 3907, թ. 4–8, 1902 թ., գ. 3917, մաս 1, թ. 20, 1910 թ., գ. 3920, թ. 4, 1912 թ.,* «Из ведомости Эчмиадзинского синода – о числе населения и церквей Борчалинского уезда, 1914 г.».– «Вестник архивов Армении», 1988, ¹ 2, с. 37.

7	Հայտարբեկ (Սվերդլով)	380	477	602	709	805	1055	1479
8	Ուռուտ	312	470	598	625	603	922	1008
9	Լեջան	380	548	777	832	851	947	1050
10	Լոռիբերդ	168	158	193	220	286	297	350
11	Ագարակ	469	456	499	593	622	875	1030
12	Օձուն	2053	2044	2288	2568	2800	3473	4125
13	Ամոջ	–	–	–	–	89	130	90
14	Այգեհատ	222	268	215	222	366	389	361
15	Արդվի	88	141	159	120	105	98	250
16	Աքորի	462	384	718	679	950	1137	1260
17	Ծաթեր	136	226	230	200	321	378	487
18	Ղաչաղան (Արևածագ)	260	290	374	417	407	440	556
19	Դսեղ	837	828	1111	1178	1548	1806	2045
20	Ջորագյուղ	241	299	378	380	511	578	723
21	Շահալի (Վահագնի)	531	597	743	803	929	1115	1228
22	Մարց	268	452	527	588	702	728	919
23	Սանահին	347	438	363	452	477	485	543
24	Որնակ (Ակներ)	229	243	319	390	408	411	497
25	Ճոճկան	435	457	529	612	850	805	779
26	Քարինջ	276	298	427	471	644	681	909
27	Ահնիձոր	126	178	109	135	165	202	266
28	Մադան	52	55	49	53	47	75	1258
29	Մղարթ	312	305	371	412	606	578	684
30	Ղամշկուտ (Եղեգնուտ)	202	275	343	370	509	582	773
31	Հագվի	132	203	269	278	353	378	483
32	Լորուտ	283	408	502	553	608	767	1013
33	Խաչիգեղ (Դեբետ)	322	305	484	534	597	691	1042
34	Սաղիբագդի (Զկալով)	154	224	312	321	361	466	505
35	Հովհաննաձոր	165	257	254	290	579	437	490
36	Աթան	–	262	209	168	255	289	503
37	Քոլագերան (Անտառամուտ)	–	191	144	205	311	355	455
38	Շամուտ	–	–	–	227	271	271	530
	Ընդամենը	13179	17109	20324	22415	27739	30115	37457

Այսպիսով, ինչպես ասվեց, հայ բնակչության աճի համեմատաբար ցածր ցուցանիշներ են արձանագրվել XIX դ. կեսերին և XX դ. սկզբներին, մասնավո-

բապես, 1841–1851 թթ.՝ 24.5 %, կամ տարեկան միջինը՝ ավելի քան 2.4 % և 1902–1912 թթ.՝ համապատասխանաբար 17.9 %, կամ՝ 1.8 %: Առավել բարձր աճ է արձանագրվել 1851–1873 թթ.՝ 133.5 %, կամ տարեկան միջին հաշվով՝ 6 %, և 1874–1902 թթ.[9]*՝ համապատասխանաբար 122.5 %, կամ՝ 4.4 %: Բնակչության աճի ցուցանիշների տատանումներն արդյունք են աճի տեմպերի փոփոխությունների, որոնք ըստ տասնամյակների ունեին հետևյալ արժեքները՝ 1841–1851 թթ. բնակչության աճի տեմպը կազմել է 19.7 %, 1858–1868 թթ.՝ 31.4 %, 1873–1883 թթ.՝ 23 %, 1883–1893 թթ.՝ 23.7 %, իսկ 1902–1912 թթ.՝ 15.2 %:*

Ներկայացված գծապատկեր 1-ը վերը բերված 1-ին և 2-րդ աղյուսակների տվյալների արտացոլումն է Լոռու վիճակի բնակչության թվի փոփոխությունների վերաբերյալ:



Գծ. 1. Լոռու հայ բնակչության թվի շարժընթացը 1841–1914 թթ.

Աղյուսակների վերլուծությունը պատկերացում է տալիս նաև ուսումնասիրվող ժամանակահատվածի բնակավայրերի ու բնակչության թվի փոփոխությունների մասին, որոնք հետևյալ պատկերն են ներկայացնում. 1841 թ.՝ *24 հայկական գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 7 գյուղ, 100–200 բնակիչ՝ 9 գյուղ, 200–300 բնակիչ՝ 6 գյուղ, 300-ից ավելի՝ 2 գյուղ:* 1851 թ.՝ *26 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 7 գյուղ, 100–200 բնակիչ՝ 8 գյուղ, 200–300 բնակիչ՝ 4 գյուղ, 300-ից ավելի՝ 7 գյուղ:* 1861 թ.՝ *27 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 1 գյուղ, 100–200 բնակիչ՝ 9 գյուղ, 200–300 բնակիչ՝ 6 գյուղ, 300-ից ավելի՝ 11 գյուղ:* 1873 թ.՝ *34 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 2 գյուղ, 100–200 բնակիչ՝ 7 գյուղ, 200–300 բնակիչ՝ 9 գյուղ, 300-ից ավելի՝ 16 գյուղ (1000-ից ավելի բնակիչ ուներ 1 գյուղ՝ Օձունը):* 1883 թ.՝ *36 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 1 գյուղ, 100–200 բնակիչ՝ 4 գյուղ, 200–300 բնակիչ՝ 12 գյուղ, 300-ից ավելի՝ 19 գյուղ (1000-ից ավելի բնակիչ ուներ 3 գյուղ):* 1893 թ.՝ *37 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 1 գյուղ, 100–200 բնակիչ՝ 3 գյուղ, 200–300 բնակիչ՝ 7 գյուղ, 300-*

[9] *ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3907, թ. 4–8, 1902 թ.:*

ից ավելի՝ 26 գյուղ (1000-ից ավելի բնակիչ ուներ 6 գյուղ): 1901 թ.՝ *38 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 2 գյուղ, 100–200 բնակիչ՝ 2 գյուղ, 200–300 բնակիչ՝ 3 գյուղ, 300-ից ավելի՝ 31 գյուղ (1000-ից ավելի բնակիչ ուներ 7 գյուղ):* 1914 թ.՝ *38 գյուղերից մինչև 100 բնակիչ ուներ 1 գյուղ, 100–200 բնակիչ՝ 0 գյուղ, 200–300 բնակիչ՝ 2 գյուղ, 300-ից ավելի՝ 35 գյուղ (1000-ից ավելի բնակիչ ուներ 16 գյուղ): Ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ 1841–1914 թթ. նվազել է մինչև 300 բնակիչ ունեցող գյուղերի թիվը և զգալի ավելացել՝ 300 և ավելի բնակիչ ունեցողներինը, որը խոսում է բնակավայրերի խոշորացման և բնակչության թվի աննախադեպ աճի մասին:*

Աղյուսակ 3

Լոռու վիճակի բնակչության բնական շարժի ցուցանիշները 1848–1912 թթ.

Տարեթիվ	Ծնելիություն		Մահացություն		Բնական աճ		Ամուսնությունների քանակը
	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	մարդ	1000 բնակչի հաշվով	
1848	*183*	*33.4*	*93*	*17.0*	*90*	*16.5*	*63*
1852	*206*	*36.0*	*55*	*17.0*	*151*	*19.0*	*39*
1854	*270*	*41.8*	*67*	*17.8*	*115*	*24.0*	*67*
1856	*277*	*40.0*	*97*	*14.0*	*180*	*26.0*	*86*
1862	*402*	*45.4*	*152*	*17.2*	*250*	*28.2*	*95*
1871	*629*	*49.4*	*206*	*16.2*	*423*	*33.2*	*106*
1902	*1239*	*42.5*	*516*	*17.7*	*723*	*24.8*	*222*
1904	*1303*	*44.4*	*449*	*15.3*	*854*	*29.1*	*186*
1910	*1466*	*45.3*	*713*	*21.0*	*753*	*24.3*	*404*
1912	*1486*	*43.3*	*722*	*21.0*	*764*	*22.3*	*317*

XIX դ. երկրորդ կեսերին հայ ընտանիքի անդամների միջին թիվը կազմել է 10–11 մարդ, իսկ XX դ. սկզբներին այդ ցուցանիշը նվազել ու կազմել է 8–9 մարդ, որը վկայում է խոշոր ընտանիքների կամ գերդաստանների տրոհման մասին:

Անդրադառնալով Լոռու վիճակի բնակչության բնական աճի ցուցանիշներին, որոնք քաղվել են չափաբերական մատյաններից, պետք է ասել, որ չնայած դրանք թերի են ու ոչ ամբողջական, սակայն բնական վերարտադրության վերաբերյալ համընդհանուր պատկերացում կազմելու համար բացառիկ աղբյուր են: Ասվածը հաստատելու համար բնակչության թվաքանակի և բնական աճի տվյալներն իրար հետ համադրելով՝ դիտարկենք ժողովրդագրական զարգացման այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են բնական շարժով:

Բնական շարժի ցուցանիշների վերլուծությունից պարզվեց, որ ծնելիության ամենացածր գործակիցներ արձանագրվել են 1848 թ.՝ 33.4 %, իսկ մահացությանը 1856 թ.՝ 14 %, ամենաբարձր ծնելիությունը գրանցվել է 1871 թ.՝ 49.4

%, իսկ մահացությունը 1910–1912 թթ.՝ 21 %: Ինչ վերաբերում է բնական աճի գործակիցներին, ապա 1848 թ. 1000 բնակչի հաշվով արձանագրվել է ամենացածր՝16.5, իսկ 1871 թ. ամենաբարձր՝ 33.2 մարդ: Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 1854–1912 թթ. բնական աճի գործակիցները 20 %-ից բարձր են եղել: Բնակչության ծնելիության ցուցանիշների մեծության մասին որոշակի պատկերացում կազմելու համար, դիմենք ռուս հայտնի ժողովրդագիրներ Վ. Բորիսովի և Բ. Ուրլանիսի առաջարկած ծնելիության ընդհանուր գործակիցների գնահատման սանդղակին, ըստ որի՝ մինչև 16 %-ը համարվում է ցածր, 16–24.9-ը՝ միջին, 25–29.9-ը՝ միջինից բարձր, 30–39.9-ը՝ բարձր, իսկ 40 %-ից ավելին՝ շատ բարձր[10]: Հետևաբար, դժվար չէ նկատել, որ Լոռու հայ բնակչության ծնելիության գործակիցներն ունեցել են բարձր և շատ բարձր արժեքներ:



Գծ. 2. Լոռու վիճակի հայ բնակչության բնական շարժը 1848–1912 թթ.

Գծապատկեր 2-ից երևում է, որ XIX դ. կեսերից մինչև նույն դարի երկրորդ կեսերը 1000 բնակչի հաշվով ծնելիության ցուցանիշները հիմնականում աճել են, որից հետո փոքր-ինչ նվազելով՝ XX դ. սկզբներին շարունակել են մնալ նույն մակարդակին: Մահացության կորը հիմնականում ունեցել է փոքր տատանումներ ու գրեթե հավասար ցուցանիշներ, որոնք XX դ. սկզբներին մի փոքր աճել են: Հետաքրքիր է, որ բնական աճի և ծնելիության կորերը, չնայած տարբեր արժեքներին, մինչև XX դ. սկզբները գրեթե նույն պատկերն են ունեցել, սակայն հետագայում նվազման միտումներ են արձանագրվել: Ըստ մահացության ընդհանուր գործակիցների գնահատման սանդղակի՝ մինչև 10 %-ը համարվում է ցածր, 10–14.9-ը՝ միջին, 15–24.9-ը՝ բարձր, 30–34.9-ը՝ շատ բարձր, իսկ 35-ից ավելին՝ արտակարգ բարձր[11]: Հետևաբար, սանդղակի հա-

[10] Н. А. Ф е о д о р о в а, Л. К. К е р и м о в а. Историческая демография: теория и метод. Уч. пособие. Казань, 2013, с. 34.

[11] *Տե՛ս Մ. Մ ա ն ա ս յ ա ն. Տնտեսաաշխարհագրական դաշտային հետազոտությունների մեթոդիկա: Բնակչություն, Երևան, 1991, էջ 21:*

մաձայն Լոռու վիճակում արձանագրվել են մահացության միջին և բարձր արժեքներ:

Հարկ է նշել, որ բնակչության թվաքանակի և բնական շարժի տվյալների հիման վրա կատարված հաշվարկները բացառիկ հնարավորություն են ընձեռել բնակչության ընդհանուր հավելաճի մեջ առանձնացնել բնական և միգրացիոն ցուցանիշները: Ասվածը հիմնավորելու համար բերենք մի քանի օրինակ. 1852 թ. գավառակում բնական հավելաճը կազմել է 151 մարդ, իսկ միգրացիոն հավելաճը՝ 96 մարդ, այսինքն՝ բնակչության ընդհանուր հավելաճի մեջ գերակշռող է եղել բնականը (61 %): Տասը տարի անց՝ 1862 թ., բնական հավելաճը կազմել է 250 մարդ, իսկ միգրացիոն հավելաճը բացասական ցուցանիշ է ունեցել՝ 5 մարդ, հետևաբար, բնակչության ընդհանուր հավելաճը կատարվել է բացառապես բնական շարժի հաշվին: 1912 թ., բնական հավելաճը կազմել է 764 մարդ, իսկ միգրացիոնը՝ 786 մարդ, այսինքն՝ բնակչության ընդհանուր հավելաճը հավասարապես կապված էր ինչպես բնական վերարտադրությունից, այնպես էլ միգրացիայի դրական ցուցանիշներից:

Ինչ վերաբերում է ամուսնություններին (ամուսնալուծությունների մասին տվյալներ չկային), ապա պետք է նշել, որ մինչև 1910 թ. դրանց թիվը, որոշ տատանումներով հանդերձ, հիմնականում աճել է, որից հետո՝ արձանագրվել է կտրուկ նվազում:

Բնակչության բնական շարժի վրա իր ազդեցությունն է թողնում նաև սեռատարիքային կազմը: Պտղաբեր տարիքի կանանց և տղամարդկանց քանակի համամասնությունը նպաստում է ամուսնությունների թվի ավելացմանը և նախադրյալներ է ստեղծում ծնելիության բարձր ցուցանիշների համար: Ցավոք, արխիվային փաստաթղթերում տարիքային կազմի վերաբերյալ տվյալների բացակայությունը հնարավորություն չընձեռեց հիմնավոր ենթադրություններ անել ծնելիության և մահացության հետագա միտումների, ինչպես նաև բնակչության վերարտադրության ռեժիմի մասին: Համենայն դեպս, բավարարվելով սեռային կազմի մասին եղած ցուցանիշներով, նշենք, որ դրանք հնարավորություն են տալիս՝ ըստ սեռերի հարաբերակցության փոփոխությունների պատկերացում կազմելու բնակչության բնական շարժի մասին (հայտնի է, որ միջին հաշվով, ավելի շատ տղաներ են ծնվում, քան աղջիկներ, ընդ որում, նորածինների մեջ սեռերի հարաբերակցությունը հաստատուն է՝ յուրաքանչյուր 100 աղջկան բաժին է ընկնում 105–106 տղա):[12] Ուսումնասիրվող ժամանակահատվածում Լոռու գավառակում տղամարդկանց բաժինն ամբողջ բնակչության մեջ միջին հաշվով կազմել է 53–54 %, այսինքն՝ յուրաքանչյուր 100 կնոջ բաժին է ընկել 115 տղամարդ: Հետաքրքիր է նշել, որ 2011 թ. մարդահամարի տվյալներով Լոռու մարզում արձանագրվել է հակառակ պատկերը՝ տղամարդիկ կազմել են բնակչության 47.4 %-ը[13]:

Այսպիսով, Լոռու հայ բնակչության ժողովրդագրական զարգացումները հանգեցրին այն հետևության, որ ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբներին (XIX դ. 50–60-ականներին) բնակչության վերարտադրության գոր-

---

[12] В. И. Б у т о в. Демография. Уч. пособие. М.–Ростов-на-Дону, 2003, с. 238.

[13] *Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ.: Սոցիալ-ժողովրդագրական հատված, Երևան, 2013, էջ 127:*

ծրնթացներում կարևոր դեր է ունեցել բնական շարժը՝ բարձր ծնելիությունը և մահացությունը, որոնք միգրացիայի սալդոյի բացասական արժեքների պարագայում անգամ հիմնականում ապահովել են բնակչության թվաքանակի հավելաճ: Հետագայում՝ 1871–1914 թթ. կապիտալիստական հարաբերությունների զարգացման տարիներին, բնակչությունը համեմատաբար բարձր հավելաճ է ունեցել թե՛ բնական, և թե՛ միգրացիոն շարժերի հաշվին:

АРХИВНЫЕ ДАННЫЕ КАК ИСТОЧНИК ОЦЕНКИ ВОСПРОИЗВОДСТВА АРМЯЎНСКОГО НАСЕЛЕНИЯЎ ЛОРИЙСКОГО УЧАСТКА
(Середина XIX в. – начало XX в.)

ГАМЛЕТ САРКИСЎЯН

Резюме

Лорийский участок одним из первых в Закавказье в 1801 г. в составе Восточной Грузии перешел под господство России. В конце XIX в. Лори являлся южной частью уезда Борчалу Тифлисской губернии.

На основании анализа статистических данных Национального архива Армении (ф. 53), касающихся армянского населения Грузии и Имеретии, представлены материалы о населении Лори (районы Степанавана, Туманяна и северной части Гугарка), около 35 сел: о динамике его численности, темпах роста, режиме воспроизводства, их причинах и тенденциях развития. Основная часть материалов вводится в научный оборот впервые.

Динамика численности армянского населения более чем за 70 лет свидетельствует, что абсолютные показатели, несмотря на колебание темпов роста, в целом имели устойчивый прирост. В 1841–1861 гг. население выросло почти в 1,9 раза или ежегодно увеличивалось в среднем на 216 чел., а в 1861–1883 гг. соответственно в 1,9 раза или на 373 чел. В период 1883–1901 гг. население Лори выросло почти в 1,6 раза или среднегодовой прирост составил 2 %.

Темпы роста армянского населения в исследуемый период были различны: в 1841–1851 гг. они составили 24.5 % (среднегодовой прирост составил 2.4 %), а в 1902–1912 гг. – 17.9 % (1.8 %). Более высокие темпы зафиксированы в 1851–1873 гг., составив 128.9 % (среднегодовой прирост составил 5.8 %) и в 1874–1902 гг.– соответственно 122.5 % (среднегодовой прирост составил 4.4 %).

С точки зрения естественного прироста, в 1852 г. зафиксированы низкие показатели рождаемости и смертности, соответственно 30 и 8%; самые высокие показатели рождаемости пришлись на 1871 г., достигнув 49.4%, а смертности на 1910–1912 гг. – 21 %. В 1848 г. на 1000 чел. населения зафиксированы самые низкие, а в 1871 – самые высокие показатели, соответственно 16 и 33 чел.; в 1852–1912 гг. показатели естественного роста превышали 20 %.

Из характеристик населения особое значение имеет также его возрастно-половая структура (в архивных документах отсутствовали данные о возрасте). В Лорийском

участке мужское население составляло в среднем 53–54 %, или на каждые 100 женщин приходилось 115 мужчин.

Таким образом, в исследуемый период армянское население Лори в основном имело высокую рождаемость и смертность. Несмотря на определенные различия темпов роста, в целом, численность населения почти непрерывно увеличивалась.

ARCHIVE DATA AS A SOURCE FOR ESTIMATION OF ARMENIAN POPULATION REPRODUCTION RATES IN LORI REGION
(The mid-19th – the beginning of the 20th centuries)

HAMLET SARGSYAN

S u m m a r y

Situated under Eastern Georgia, Lori was one of the first Transcaucasian regions that passed under the rule of Russian Empire in 1801. At the end of the 19th century Lori was the southern part of Burchalu region of the larger Tiflis province.

Based on statistical data drawn from the National Archive of Armenia 53 referring to the Armenian population of Georgia and Imereti, we have outlined the reasons and development trends for population change, growth rates, reproduction regime, making use of figures most of which are put into scientific circulation for the first time.

The change of the number of Armenian population throughout 70 years suggests that despite varying population increase rates, the population in absolute terms registered steady growth. The population increased 1.9 times or grew on the average of 216 people between 1841–1861, while for 1861–1883 the figures made 1.9 and 373 respectively. In 1883–1901 the population increased almost thrice or by the annual average of 2 %.

The growth rates for Armenian population differ making 24.5% in 1841–1851 (annual average of 2.4 %) while between 1902–1912 it was 17.9 % (annual average of 1.8 %). Higher rates were registered in 1851–1873 – 128.9% (annual average of 5.8 %) and in 1874–1902 – 122.5 % (annual average of 4.4 %).

Birth and death rates for 1852 were registered with low coefficients – 30 and 8 %, the highest birthrate was marked in 1871 – 49.4 %, the highest mortality rate between 1910–1912 – 21 %. In 1848 the lowest rate of natural increase per 1000 people was seen, while the figures for 1871 mark its highest point – 16 and 33 people. The natural increase coefficients for 1852–1912 were higher than 20 %. Thus, the Armenian population of Lori experienced high mortality and birthrates resulting in steady population growth.